Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՄԱՅԻՍ 15 1893 ԹԻՒ 9

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

«Հայք»ի խմբագիրն հրաւիրեալ լինելով Շիքակոյի մէջ տեղի ունենալիք Հանրային Մամլոյ Համաժողովին մէջ խօսիլ Հայ մամլոյ վերայ, Շիքակոյ պիտի երթայ յառաջիկայ շաբթու և այսպէս 8 կամ 10 օր բացակայ պիտի գտնուի Նիւ Եորք քաղաքէն։ Այս պատճառաւ ներումն կը խնդրէ Արգոյ բաժանորդներէն որ ստիպուած է 10րդ թիւն ուշկեկ հրատարակել և միայն 8 երեսէ բաղկացեալ։ Յոյս ունի թէ յետոյ պիտի կրնայ փոխարինել այս ակամայ կրճատումն։

*

* *

Արդեօք կարելի չէ՞ որ Արժ. Հայր Պարոնեան, Մանչէսթրի Հայոց ուսեալ հովիւն, Շիքակոյի Կրօնական Համաժողովին առջև ներկայացուցէ Հայ Եկեղեցին, եթէ էջմիածինն կամ Կ. Պոլսոյ Պատրիարքարանն չեն կրնար յատկապէս պատուիրակներ յղել։

Կարծեմք թէ Հայր Պարոնեան լաւ գիտէ անգլիերէն, և կրնայ Հայոց Եկեղեցւոյ վերայ ըստ արժանւոյն ճառել այս առթիւ։

Արդեօք Ամերիկայի Հայերն չե՞ն ուզեր աշխատիլ, և Մանչէսթրի մեր հայրենակիցք չե՞ն յօժարիր այսպիսի կարգադրութեան մի։

Ճավայի Սուրապայայի «Հայոց Խրախուսական Միաբանութիւնն» որ, ինչպէս ծանօթ է մեր ընթերցողաց, 600 ֆր. արդէն պահեստի տուած է յօգուտ Կեդրոնական յանձնախմբին, այս անգամ առ Նիւ Եորքի Հ. Հ. Յանձնախումբն ուղղեալ պաշտօնական նամակաւ կը յայտնէ թէ քուէարկութիւն կատարած են Կեդրոնին ընտրելեաց վերայ։ Քուէարկութեան արդիւնքն ծանուցած են, զոր յանձնախումբն պիտի հրատարակէ պատեհ առթիւ։

«Հայոց Խրախուսական Միաբանութիւնն» մեր սակաւաթիւ իմաստուն և կարող Միութիւններէն է, և խնդիրներն ուշիշ ըմբռնելով ի գործ դնելու պատուական տրամադրութիւն ունի։ Փարիզի Հ. Հ. Յանձնախումբն ու Սուրապայայինքն զուգակշիռ և ընտիր ամոլք մի կը կազմեն, որոց օրինակին երանի՜ թէ հետեւէին Եգիպտոսի և այլ Հայ գաղութք։

Փարիզի Հ. Հ. Յանձնախումբն ալ անսպառ յօժարութիւն ունի տալու յօգուտ հայրենասիրական գործոց. տուած էր անցեալ տարիներ և տուաւ այս տարի եւս 1,363 ֆրանք, յօգուտ լոնտոնեան Առմէնիի, և, ինչպէս արդէն ծանուցած եմք, 515 ֆրանք յօգուտ «Հայք»ի։ 12 անգլիական ոսկիով ալ մասնակցեր են ի պատիւ Ճէյմս Պրայսի տրուելիք Հայկական Հացկերոյթին։

ՀԱՅԿ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հայկ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հոգ Լրագրութեան Հարիւրամեայ Տարեդարձ։—Ազգային քաղաքակրթութիւն։ — Նամակ Մարզուանէ. — Նամակ Ամասիայէ. — Նամակ Կեսարիայէ։ — Ուսթերի Հայոց վերջին դէպքերն. — Երկտող ի Մշոյ. — Ազգային և զանազան լուրեր.—

Կը խնդրեմք որ մլնի օրտերի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆՆ

Հայերէն առաջին լրագիրն «ԱԶԴԱՐԱՐ», խմբագրութեամբ Յարութիւն քահանայ Շմաւոնեանի, հրատարակուիլ ըսկսաւ ի Մատրաս, ի Հնդկաստան, 1794 Մայիս 20ին, ներկայէս 99 տարի առաջ։

«Հանդէս Ամսօրեայ» հայ լրագրութեան պատմութիւնն տալու ատեն՝ 1887 ին (տես Յունիսի թիւն) ծանօթութեամբ մի կը յորդորէ «ազգային խմբագիրներն ու գրագէտներն՝ որ 1894 Մայիս 20ին կատարուի՝ հայ գրականութեան գլխաւոր մէկ կետին՝ հայ լրագրութեան հարիւրամեայ փառաւոր Յոբելեանն։»

Այդ թուականին տարի մի միայն մընաց և տակաւին ոչ մի թերթ, որքան գիտեմք, կը յիշեցունէ և ոչ մի պատրաստութիւն կը լինի զյոբելեանն կատարելու։

«Ամսօրեայ Հանդիսի» պատ. անօրինութեան յուշ ածելով իւր թելադրութիւն, կը խնդրեմք որ փութայ խօսիլ այդ մասին և խօսեցունէ ազգային լրագրութիւնն, որպէս զի անյապաղ կարգադրութիւններ սկսին կատարուիլ մեծ հարիւրամեակն տօնելու ըստ արժանւոյն։

«Հայք»ի խմբագնրն այդ մեծ տօնին փոքր նախատօնակն կը յուսայ կատարել ներկայ ամսոյս վերջն, ի Շիքակոյ, խօսելով հայ լրագրութեան վերայ Մամլոյ Համաժողովին, և ներկայացունելով զանազան հայերէն և հայկական թերթերու և հանդէսներու նմոյշներու հաւաքածոյ մի, իբր փոքրիկ ցուցահանդէս հայ պարբերական մամլոյ։

"The Moslem World" է անունն այն անգլիերէն հանդիսի զոր սկսած է հրատարակել Նիւ Եորքի մէջ Մուհամմէտ Ալէքսանդր Բլսէլ Ուէպ, մահմետական կրօնն ծանօթացնելու և տարածելու համար։ Առաջին թիւն ստացանք զ«Հայք» մամլոյ տակ դնելու պահուն, ուստի և յառաջիկայ թուով կը մնայ մեզ խօսիլ ասոր վերայ։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շար. Տես նախորդ թիւն)

Բ

Մեղադրելի՞ էր ուրեմն Ներսէս եթէ իւր սիրտ յուսով տրոփեց ի լուր հզօրաց այնքան համակրական բանից. ո՛չ։ Եթէ երբէք յուսադիր խօսքերու առատութենէն հետևցուց թէ դիւանագէտքն՝ մարդասիրական շարժառիթներէ մղեալ՝ ձեռք պիտի առնուին Հայոց խնդիրն, ի հարկէ սխալեցաւ, թէպէտ այդ սխալ յաւէտ պատուաբեր է նորա հայրենասէր սրտին։ Զմոռնանք, սակայն, թէ Պատրիարքն դիւանագիտական ջանքեր միայն ըրաւ անոր համար որ չէր կրնար ուրիշ բան փորձել յայնժամ։ Քաղաքական մեծամեծ դէպքերու ինքնեկ առթիւ, ջրերու յանկարծ յուզուած պահուն, ընդոստ ոտքի ելաւ նա և մարդկային տաղանդի ու խօսքի բոլոր զօրութիւնն գործածեց Հայաստանի փրկութեան համար։

Հայաստանի փրկութեան համար առաւել քան խօսքի զօրութեան պէտք կար, Ներսէս գիտէր դայդ, սակայն անկարելի և աններելի էր նմա խօսքի ուժէն տարբեր այլ գործածել այն տուեալ պարագայից մէջ։

Կարելի՞ է սակայն ենթադրել թէ Ներսէս, այն դառն փորձառութենէն յետոյ որով իւր երկիւղք իրացան և ոչ յոյսք, դէթ ի մտի չէր սկսած ուրուագծել նորոգ քաղաքականութիւն մի՝ ոչ լոկ դիւանագիտական։

Ըստ մեզ, անտարակուսելի է այդ։ Եւ եթէ կարենար, այսօր շատ պիտի մեղադրէր զայնպիսիս որք լոկ խօսքի ուժով Եւրոպան ի գործ չարժել և զՀայաստան փրկել կը յուսան։

Զայդ յուսալ այնքան աւելի անբանաւոր է որքան նորօրինակ է 1878էն ի վեր յԵւրոպա պարզուող միջազգային կացութիւնն։ Ցիրաւի, յորմէ հետէ Եւրոպա Եւրոպա եղած էր, երբէ՛ք այնպէս քաջ պատրաստուած չէր ահռելի և ընդհանուր պատերազմի որպէս ի ներկայիս։ Եւրոպայի մեծ պետութիւնք այժմ չունին բանակ, այլ են համակ բանակ։ Աստի կը հետեւի թէ միջազգային իրաւունք (կամ անիրաւութիւն) ի գործ դնելու համար ոչ երբէք այնքան մեծ պէտք զգացուած է բուռն ուժի որքան ներկայ լուսաւորեա՛լ դարուս մէջ։

Մինչ սէրութիւնք կը յարգեն միջազգային իրաւունք երբ չեն կարող չյարգել, և վայրագ կատաղութեամբ զիրար փշրելու պատրաստ՝ միմեանց կը հսկեն երկիւղիւ, ինչպէս կարելի է որ դոցա քաղաքականութիւն բարձր մարդասիրութենէ ներշնչուի մեզ նման տկար և արհամարհեալ ժողովրդի համար։

Միւս կողմանէ, մինչ իւրաքանչիւր պետութեան ծոցին մէջ անհանդարտ և դժգոհ տարրեր կը զօրանան, և անիշխանական և ընկերվարական ցնորից զհետ պնդողներու թիւն սպառնալից համեմատութիւններ կ՚առնու, այնպէս որ իւրաքանչիւր մեծ սէրութեան կայ մարտ ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ, ինչպէս ներելի է մեզ սպասել որ դոքա իրենց տագնապեալ վիճակի մէջ ուշ և կարեւորութիւն ընծայեն մեր խնդրոյն։

Ուրեմն մեր ազգային քաղաքականութեան լաւագոյն գործնական ծրագիրն յօրինելու ատեն պէտք է Եւրոպան տեսնեմք ոչ որպիսի պարտէր լինիլ այն, այլ ճիշդ որպիսի որ է։

Կրնամք մեղադրել զԵւրոպա, կրնամք մինչև իսկ արհամարհանք զգալ իւր անխիղճ անտարբերութեան համար հանդէպ հէք Հայաստանի, սակայն չեմք կարող Եւրոպայի ոգին ու քաղաքականութիւնն փոխել, հարկ է որ մեք մեր սկզբունք և ընթացք բարեփոխեմք, ուղղեմք։

Պարտիմք վարուիլ դիւանագիտական ասպարիզին մէջ քաջ ճանաչելով զԵւրոպա։

Եթէ կ՚ուզեմք որ Եւրոպա հասկանայ զմեզ և թերեւս օգնէ մեզ, պէտք է որ Եւրոպօրէն խօսիմք ու շարժիմք։

Մինչև ցարդ երկու սխալ գործածեմք մեք. զԵւրոպա լաւ հասկացած չեմք —և Եւրոպայի մեք զմեզ հասկանալի ըրած չեմք։

Առաջին սխալն, որպէս տեսանք, այն է որ մեք կարծեր եմք թէ Եւրոպեան

դիւանագիտութիւնն մարդասիրական և գթառատ ոգւով կը կառավարուի, ուստի և զՀայաստան անիրաւեալ և խղճալի եմք ներկայացուցեր։

Երկրորդ սխալն այն է որ մեք իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ ներկայացեր եմք դիւանագիտութեան և իբրեւ կրօնական ազգ խօսեր եմք։

Թուրք տէրութեան առջեւ դարերէ ի վեր իբրեւ կրօնական ազգ ապրելով, և մեր բոլոր ներքին ազգային վարչութիւնն ալ եկեղեցական իշխանութեան ներքեւ լինելով, վարժուած եմք կրօնականօրէն խորհելու և վարուելու։ Այս մեզ յանցանք չէ, ըստ որում մեր գտնուած քաղաքական վիճակին, կամ անքաղաքական կեանքին անխուսափելի հետեւանքն է։ Ներսէս յԵւրոպա յղեց զՄրիմեան Հայրիկ և զՆար Պէյ Սրբազան, երկու եկեղեցականներ, զՀայ դատն ներկայացուցանելու. եկեղեցական ազգապետի եկեղեցական պատուիրակք էին դոքա. կրօնական ազգի կրօնական կերպն էր այդ, ինքնեկ, բնական, գրեթէ բնազդական կերպն։ Սակայն այդ կերպ ո՞րքան որոշ գունով կը ներկայացուցանէր մեր ազգի կրօնականութիւնն առաջի Եւրոպայի։ Եթէ եկեղեցական Համազգային սինօթ մի լինէր այն, Մրիմեան և Նար Պէյ Սրբազանք անշուշտ փառաւորապէս կրնային ներկայացուցանել Հայոց Պատրիարքն և հայ եկեղեցին. բայց դիւանագիտական մարմնոյ մի առջեւ, ի Պեռլին, ոչ-կրօնական դատ մի, ազգային ինքնօրինութեան պահանջ մի ջատագովել եկեղեցականաց շրթամբք, անպատշաճ և աննպաստ կերպ մ'է եւրոպօրէն նկատելով, թէպէտ յոյժ պատշաճ և բնական է հայօրէն խորհելով։

Մինչև անգամ իմ այս դիտողութիւն կրնայ շատ Հայերու տարօրինակ թուիլ կամ արտառոց, ա՞յնքան կրօնական եմք մեք դարձած մինչեւ ցծուծ ոսկերաց։ Ոմանք կրնան մինչեւ իսկ կարծել թէ կը հակասեմք մեք մեզ Նախ երկու սրբազաններուն տաղանդին և պերճախօսութեան մէջ լաւագոյն յարմարութիւններն գտնելով, և ապա նոցա եկեղեցական կարգին մէջ աննպաստ և անյարմար հանգամանք տեսնելով։ Ուրեմն ըսենք ի կատարեալ պարզութիւն թէ ինչ որ յայնժամ ըրինք, իբրեւ կրօնական ազգ զմեր լաւագոյնն ըրինք, բայց երբ եւրոպական տեսակետէ դիտեմք, կը ստիպուիմք խոստովանիլ թէ աշխարհական կարգի հայ տաղանդներ, Օտեանի նման Հայեր, մեծագոյն և՛ս պատշաճութեամբ կրնային ջատագովել Հայոց դատն, քանզի ոչ միայն հայոց բարձր ընդունակութեան ապացոյցն այլ և քաղաքական մարդու և դիւանագիտական կարողութեան կենդանի օրինակն ներկայացուցած պիտի լինէին յանձինս, և յայանի է թէ այդ ո՞րքան աւելի իրանալի և գործնական գոյն պիտի կրնար տալ մեր ազգային ինքնօրինութեան պահանջին։

Արդեօք կրցի՞նք պարզել խնդիրն։

Կ'ըսեմք թէ Մրիմեան Հայրիկի անձնական տպաւորութիւնն եւրոպական դիւանագիտութեան վերայ կրնայ թարգմանուիլ սա իմաստիւ— Մեք Հայքս հին ազգային եկեղեցի մ'ունիմք և բարձր տաղանդի տէր եկեղեցականներ, ուրեմն արժան եմք ձեր համակրութեան։

Օտեանի նման անձերէ բաղկացած աշխարհական պատուիրակութեան միտպաւորութիւնն պիտի կրնար թարգմանուիլ սա իմաստիւ— մեք թէև կրօնական ժողովուրդ եմք և մեր ներքին ազգային վարչութիւն եկեղեցական է այժմ, կը բաղձամք քաղաքական հանգամանք տալ մեր վարչութեան, և արդարեւ ունիմք մեր մէջ աշխարհական մարդիկ որք եփած են քաղաքական և դիւանագիտական կեանքի մէջ. ուրեմն մի՛ վախնաք մեզ տալու վարչային ինքնօրինութիւն։

Եթէ յաջողեցանք բացատրել այս կետ, ընթերցողին դիւրին պիտի լինի ինքնին նշանակել ազգային քաղաքականութեան կարեւոր մէկ յօդուածն, այսինքն թէ եւրոպայի պարտիմք ներկայանալ ոչ իբրեւ կրօնական ժողովուրդ այլ իբրև ազգային զգացմամբ առգորուած ցեղ՝ պատրաստ ազգային քաղաքական կեանքի։

Բայց ըսել չեմք ուզեր թէ պէտք է խաբել զԵւրոպա, ներկայացուցանելով մեք զմեզ կեղծ գունով։ Պէտք է լինիմք ինչ որ կ'ուզեմք երեւիլ. պէտք է դադարիմք «տիրացու» ժողովուրդ մի լինելէ, որպէս ոմանք կը կոչեն զմեզ։

Եթէ ազգային վերածնութեան անկեղծօրէն ձգտիլ կ'ուզեմք, հարկ է որ ազգային եկեղեցի և հայութիւն հոմանիշ համարելու աւանդական սովորութենէն

հրաժարիմք։ Եկեղեցի և ազգ մի և նոյն բանն բնականորէն նկատուած են անցեալ դարերու մէջ երբ ազգային ինքնաճանաչութիւն չկար մեր մէջ, բայց զարդիս, այլ ևս հակասական կը լինի ազգային ինքնորինութիւն պահանջել և միանգամայն եկեղեցին ազգութեան կապն, պահապանը և հոմանիշն ճանաչել։

Ուրեմն ներքին գործունէութեան և պատրաստութեանց կարգին մէջ կայ այս փափուկ և դժուարին գործ, զոր անշուշտ ազգին զարգացեալ և լուսամիտ անդամոց անկ է խոհեմութեամբ կատարել։ Հայ եկեղեցւոյ նուիրապետութիւնն պահպանելով հանդերձ, պէտք է մեր ներքին և դիւանագիտական գործոց մէջ ամեն ինչ կազմել ու վարել իբրեւ հայ, առանց նը-կատելու եկեղեցական և յարանուանական ոևէ խարիր։

Եւ մեք համարձակօրէն կը յայտարարեմք թէ ազգին այն եկեղեցական և աշխարհական գործիչներ որք կրօնական կամ յարանուանական մոլեռանդութիւն կ'արծարծեն ոևէ հաշուով, նոքա անդէտ կամ անխիղճ թշնամիներ են հայու դատին, և մեծ արգելք կը լինին ազգային գործոյն։

Եթէ չսովրիմք այժմէն ազգային ժողովներ ընել, ընկերութիւններ կազմել և թերթեր հրատարակել անգիտանալով իրարու կրօնական համոզում և եկեղեցական դաւանանք,— եթէ չկարենամք այսօր զիրար իբրեւ հայ նկատել և յարգել և սիրել ի հեռուկս եկեղեցական տարբերութեանց, ո՛չ կարող և ո՛չ արժանի կը լինիմք վաղիւ ազգային ինքնորինութիւն ձեռք բերելու և վայելելու։

Լինի՛մք ազգային ինքնաճանաչութեամբ հասուն ժողովուրդ, ոչ-տիրացու ազգ, և ներկայանամք աշխարհի իբրև այնպիսի։— ահա այդ է մեր ազգային քաղաքականութեան կարեւորագոյն կետերէն մին։

Այդ պայմանաւ ոչ միայն Եւրոպա աւելի բանաւոր և յարգելի կը գտնէ մեր պահանջ, այլ և մեք զմեզ աւելի զօրաւոր, աւելի խտացած և համերաշխ կը զգամք։

Հայե՛ր, յարգեմք ինքնորինութեան նախապատրաստիչ պայմաններն եթէ կուզեմք իրօք հասնիլ ինքնորինութեան։

Աշխարհ մտնելու և ազգաց կարգն անցնելու համար պէտք է լինիմք ո՛չ տիրացու, այլ աշխարհական ժողովուրդ։

Իբրեւ աշխարհական ժողովուրդ նորէն յաշխարհ մտնելու կամ զՀայաստան աշխարհ վերածնելու համար ուրիշ բան մ'ալ անհրաժեշտ է մեզ։— լինիլ մարտնչող, բուռն, աներկիւղ ժողովուրդ— գործածել բանի հետ բազուկ, և փաստի հետ փայտ։

Ցանցելումն մեր գոյութիւն պահպանելու համար հնարքներու դիմեցինք, ի ներկայիս պէտք է դիմել բուռն միջոցներու։

Ցանցելումն՝ յարժամ Թուրքն հգօր էր և ահաւոր նոյն իսկ յաչս Եւրոպայի, մեզ, ճնշեալ Հայոցս համար ապահովութեան միակ միջոցն էր հնարագիտութիւն, որոյ շնորհիւ, որքան հնար է քիչ դան ըմպելով, ապրիլ կրցանք Թրքաց գաւազանին ներքեւ։ Կեղծաւորութեամբ, սուտ խոնարհութեամբ, առ երեւոյթ աղքատութեամբ, ակամայ հնազանդութեամբ կրցած են մեր տաճկահայ նախնիք ապրիլ։ Ստիպուած՝ ցած բռներ է Հայն իւր գլուխ, ցած շիներ է իւր տան դուռ, պերճ հանդերձ չէ հագեր, ձի չէ հեծեր, հրապարակի վերայ միշտ զսպեալ, համեստ, ցածուն և նկուն ցուցեր է ինքզինք, և տակաւ ալ յիրաւի բնաւորութեամբ ցածուն և նկուն եղեր է։

Այո՛, Հայն՝ Թրքի վայրագ և ամենայաղթ ուժէն ահաբեկ՝ գործածեր է պաշտպանողական միջոցներ, չկրնալով գործածել յարձակողական միջոցներ, և չկրնալով գործածել յարձակողական միջոցներ՝ տկարացած, այլասեռած, իգաբարոյ դարձած է։

Այս չարիք ի հարկէ, մեր կամաց հակառակ պատահած է մեզ։ Կ'ողբամք զայն, բայց չեմք կրնար ուրանալ։ Բնական օրինաց համաձայն՝ տկարն առաջի հզօրին կը գործածէ տկարի միջոցներն — պաշտպանողական միջոցներ, իւր գոյութիւն պահպանելու համար։ Սարդն ոտքերն տարածելով և մեռեալ ձեւանալով կը խաբէ իւր թշնամին։ Տկար կենդանիք փարոտող կենդանեաց դէմ չունենալով բաւական ոյժ, ունին թոյն կամ խայթոց, չփոթիչ գոյն կամ զրահանման պատեան, սուր լսողութիւն և արագնթաց սրունք։ Կարիճն, չքոտի և արհամարհ կենդանի, զինեալ է խայթոցով։ Իսկ պօա օձն, որ կարող է եղջերուն ու կոմն ճմլել իւր սոսկալի սեղմամբ, չունի թոյն կամ խայթոց,

և ինչո՞ւ բնութիւնն չնորհէր նմա թոյն որսում կարօտ չէ։ Հզօր կենդանիք ունին ոչ թոյն կամ պատեան, այլ ժանիք, ճիրան, վայրագ քաջութիւն և ֆիզիքական մեծ ոյժ։

Բոյսերն ալ, որք ոչ փախչիլ կրնան և ոչ մարտնչիլ, միայն պաշտպանողական միջոցներ ունին ընդդէմ կենդանեաց. է՝ որ իւր թանձր կեղևով կամ սուր փուշերով, է՝ որ իւր անախորժ կազերով կամ գարշելի հոտով, և է՝ որ իւր լեղի համով կը խրատուցանէ կենդանիներն և ուտիճներն։

Արդ, մեր ցեղին յարձակողական կարողութիւնք, ժանիք, ճիրան, քաջութիւն մաշած են անգործածութեամբ, և, ընդհակառակն, պաշտպանողական միջոցներն զարգացած են Թրքի սարսափելի բռնապետութեան տակ։ Գիտեմք աղօթել առ Աստուած, աղաչել հզօրաց, անիծել զչարագործս։ Առատ աղօթք, յորդառատ թոյն և անսպառ անէծք կ'արտադրեմք։ Կը խայթեմք մեր անախորժ ընկեր, զբարպարութեան եւ բամբասանքի գարշելի հոտեր կը հանեմք մեր առեցեալ մրցակցաց դէմ, եւ այլ այդ օրինակ տկար եւ ցած միջոցներով ինաս հասցուցանել կը հընարիմք կամ խոյս տալ հարուածէ։

Այժմու Հայն չէ հին դարուց, Տիգրաններու օրով ապրող Հայուն նման. իւր ինչ ինչ կարողութիւններ, գործարաններ մաշած տկարացած են, եւ ուրիշ գործարաններ չափազանց գործածութեամբ մեծցած եւ այլակերպ այլանդակ համեմատութիւններ տուած են նորա կազմութեան։

Տարուին կը պատմէ թէ ի կղզիս ինչ Ովկիանու տեսած է թռչուններ որք ոչ եւս կարող էին թռչան առնուլ, վասնզի կղզին փոքր լինելով երկար դարեր, սերունդէ ի սերունդ թռչիլ պէտք չէ եղած նոցա եւ այսպէս նոցա թեւք տկարացած, յետագէմ շրջափոխութիւն կրած են։ Մեք, Հայքս ալ, երկար դարեր մեր թեւ բարձրացուցանելէ եւ զարնելէ դադրած լինելով մաշեցուցած եմք զայն, եւ այժմ յարձակիլ, բուռն լինիլ, մարտնչիլ մեզ յոյժ դժուար կը թուի, անգործնական, գրեթէ ցնորական։

Երբ վերջին 10—15 տարիներ ապացուցին թէ հզօր Եւրոպա չկամիր իւր ուժով մեզ փրկել Թրքի բռնապետականը-ծէն, եւ Թուրքն սկսաւ աննախնթացեալ կատաղութեամբ ջախջախել զմեզ, երկու կարգի սկսաւ բաժնուիլ Հայ ժողովուրդն — մէկ կարգն սարսափած կրկնեց դարաւոր առածն տկարին թէ պարտ է «համբուրելով ճակտին դնել այն ձեռք զոր չես կարող կտրել,» եւ այդ երկչոտ եւ վատ դասուն ներկայացուցիչն եղաւ ու կը մընայ Աշրգեան Պատրիարքն։

Միւս կարգն, փոխանակ սարսափահար լինելու սրտմտեցաւ, եւ շարժիլ ուզելով ցնցուեցաւ տկարութեամբ, եւ զարնել ուզելով ինքն իւր մազեր փետեց մոլեգնեալ։ Այս դասն կեանքի նշան ցոյց տուած եղաւ։ Անկարգ եւ անզօր ցընցումնքն ծառայեցին իւր վատած անդամներուն մէջ արեան շրջանն արագացուցելու, իւր դալուկ դիմաց վերայ կարմրութիւն երևցուցանելու։ Ցուսադրիչ հակադարձութիւն մ'է այդ հիւանդ մարմնոյն մէջ։

Կարնոյ, Սասնոյ, Արտրկերի, Կեսարիոյ և այլ քաղաքաց մէջ հետ գհետ տեղի ունեցած մարտնչողական մանրադէպք կը ցուցնեն թէ Հայն մեռած չէ։

Բայց վասնզ մի կայ մեզ ներկայ ժամանակին յատուկ. Ցանցելումն ցածուն և յոյժ տկար կը ձևանայինք, այժմ կը ջանամք երեւիլ աւելի հզօր և կարող քան իրօք եմք։ Մարդ կայ որ հարիւր մարդու ոտնաձայն հանել կ'աշխատի, և սմանք ալ կը թուին կարծել թէ ցնցումն ալ շարժումն է և գրգռեալ կարմրութիւնքն բնական քաջողջութեան նշան։ Կ'ուզե՞մք միթէ նմանիլ այն անխայթոց միջատներուն, որք կը բզզեն իրրեւ մեղու և կը խաբեն թշնամիներն, կամ այն անվնաս բնդեռանց որք ուռազակութիւն կը գործեն պիծակի երեւոյթ և քալուածք կեղծելով։

Միթէ Թուրքն կը խաբուի՞ մեր երեւոյթներէն։ Միթէ կրնա՞մք զԵւրոպան պատրել։ Ո՛չ, պարտ է մեզ լինիլ բուռն և հզօր, ոչ թէ լոկ երեւիլ ջանալ։ Պոռալով, ոտմկելով չէ որ թշնամեաց երերկիւղ պիտի ներշնչեմք և համակրողաց յանդգնք։

Մի՛ տարակուսիք թէ Բ. Դուռն մեր աղմուկ, մեր թերթեր, մեր փաստեր և բողոքներ ոչ ինչ կը համարի մեր տկարութիւն տեսնելով։ Եւ նոյնինքն Եւրոպա մեր խեղճութեան և մեր աղաչանաց նա-

յելով եթէ գթայ իսկ մեր վերայ, չպիտի կրնայ զմեզ ինքնօրինութեան արժանի համարիլ եթէ կը պակսի մեզ ոյժ։

Մեզ, Թրքահայոցս, կարի դժուարըմբռնելի է այս ճշմարտութիւն։ Հարկ է սակայն որ ըմբռնեմք զայն եթէ փրկուէտ քաղաքականութեան գիծն գտնել և յարգել կ'ուզեմք։

Հնարագիտութեամբ պահպանած եմք դարերով մեր գոյութիւն, և այժմ ալ հընարագիտութեամբ, խելացի խօսքերով կը յուսամք համոզել զԵւրոպա և փրկուիլ։ Խօսքի առատութեամբ կը յուսամք ուժի տեղն ալ ընուլ։

Եւ շատ կը սխալիմք։

Ազգային փրկութեան պայմանն լոկ խելք չէ, այլ և բնաւորութիւն, և աւելի բնաւորութիւն քան թէ խելք։

Պուլկարք նուազ խելացի են քան զմեզ, բայց աւելի բուռն և անվախ լինելով՝ ազատեցան։

Արաբք նուազ խելացի էին քան զբազումս այն ազգաց որոց յաղթեցին։ Թուրքք նուազ սրամիտ էին քան զՑոյնս որոց ձեռքէն Բիւզանդիոնի կայսրութիւնն յափշտակեցին։ Եւ մեք Հայքս ալ յաճախ յաղթուած եւ տիրուած եմք քան զմեզ նուազ ուշիմ ազգերէ։

Խելքն ահագին զօրութիւն է, բայց ամեն տեսակ ուժի տեղ չկրնար բռնել։ Աշխոյժ, եռանդ, արի սիրտ, ձեռներիցութիւն, յանդգնութիւն, յարատեւութիւն այն բնաւորական յատկութիւններն են առանց որոց չկրնար ժողովուրդ մի բռնաւորի լուծն խորտակել և Ազատութիւն վերստանալ։

Այս ճշմարտութիւնն հասկցած չլինելով է որ մենէ ոմանք կը կարծեն թէ Եւրոպա զմեզ ինքնօրինութեան արժանի պիտի նկնատէ եթէ հասկցունեմք նմա թէ մեք խելացի՝ կրթասէր, աշխատասէր, հողագործ, արհեստաւոր, վաճառական ժողովուրդ մ'եմք, և ունկմք ընտիր լեզու, հին եկեղեցի, ճոխ գրականութիւն։

Եւրոպա մեզ կը պատասխանէ, կամ կրնայ պատասխանել— Լա՛ւ, ուրեմն արժանի էք լաւագոյն կառավարութեան, բայց չունիք ինքնօրէն և ինքնատէր լինելու յատկութիւններն. քիչ մ'եւս համբերեցէք և Թրքին տեղ նուազ անգութ տէր մի պիտի ունենաք և աւելի արդար կառավարիչներ։

Եւ մեք կը պնդեմք թէ սպասել շատ սպասած եմք, ո՛չ եւս կարեմք համբերել. պէտք է որ Եւրոպա փութայ Հայկական Խնդրոյն լուծում տալ, ազատել զմեզ Թրքի հարստահարիչ լծէն։ Զայս կը պահանջէ 61դ յօդուածն Պէռլինեան դաշնագրոյն, զայս կը պահանջէ արդարութիւնն, զայս կը պահանջէ քաղաքակրթութեան շահն։

Եւ յայսպիսի սրամիտ և պերճախօս խօսքերով կը ջանամք համոզել զԵւրոպա որ ուրիշ խնդիրներ և միջազգային ծանր նկատողութիւններ ի բաց թողլով՝ սպառնայ Թրքին, և եթէ սպառնալիքն կամ նաւային ցոյցն չբաւէ, պատերազմի, մեզի համար արիւն թափէ ի հարկին։

Այսպէս՝ խելքի չափազանց առատութիւնն զմեզ կը վարէ կը տանի ծայրայեղ տեսութիւններու, պատիր յոյսերու, վերջապէս ցնորելու։

Ո՛չ, մեր պերճաբան փիլասաբանութիւն պատիւ չբերեր մեզ. մեր աղաչանք և մեր բողոքներ զմեզ ծաղրելի կ'ընեն առաջի աշխարհի։

Ինչ՞, կրնա՞մք պատրել զԵւրոպա իբրեւ տխմար մանուկ։ Մեք ոտքի չելնեմք և ուզեմք որ նա՞ ոտքի ելնէ մեզ համար. մեք արիւն թափել չուզեմք և խնդրեմք որ նա՞ արիւն թափէ մեզ համար. մեք խօսիմք ու նա՞ մարտնչի։

Եւ կը կարծե՞մք թէ արդար է մեր խնդիրք։ Կը կարծե՞մք թէ կը վայլէ մեզ որ մեր ձեռք բանամք մուրացկանօրէն առաջի Եւրոպայի՝ փոխանակ վերցուցանելու զայն ընդդէմ մեր թշնամւոյն, մեր հարստահարչաց։

Բայց, պիտի ըսեն ոմանք ի մէջն, մեք ինչ՞ ոյժ, ինչ՞ զէնք, ինչ՞ բանակ ունիմք։ Ինչո՞վ և ինչպէս հնար է մեզ մարտնչիլ օսմ. զօրութեան դէմ։

Չպիտի ըսեմ թէ կրնամք շատ ոյժ, շատ զէնք և շատ զինուոր ունենալ եթէ ուզեմք, այլ պիտի ըսեմ այժմ թէ պարտիմք յօժար լինիլ ի հարկին դործածելու անկանոն զէնք ու ոյրք, և փոքր ոյժն զոր ունիմք։

Դիցուք թէ Եւրոպեան Պետութիւն մի, Ռուսիա, օրինակի համար, կամ Անգլիա, տրամադիր լինէր մեզ օգնել զօրք կամ զօրավարք, իրաւունք չունէ՞ր մեզ հարցնելու թէ մեք ինչքան զոհ և քանի՞ զօրք ունիմք նուիրելու պատրաստ։

Եւրոպա իրաւունք չունի՞ մեզ ըսելու․ Հայե՛ր, բանակ պիտի հանեմ ես ձեզ համար, բայց բանակս պէտք է մարտնչի ձեզմով ի միասին․ եթէ չէք կրնար և դուք հանել բանակ, հանեցէք ինչ որ կրնաք, 5,000, 2,000, 1,000 զինուոր։

Քրիստոս ի՞նչ պահանջեց հինգ հազար հոգին կերակրելու համար․ աշակերտք չունէին բաւական հաց, ունէին միայն 5 նկանակ և 2 ձուկ․— բերէ՛ք, ըսաւ, քիչն զոր ունիք, և ես պիտի գործեմ զայն բաւական շատ։

Հայե՛ր, եթէ անգութ եւրոպայի տեղ գթածն Աստուած իսկ լինէր մեր բողոքոց ունկնդիրն, պիտի ըսէր, "բերէ՛ք ինձ 1,000 կամ 100 զինուոր, բերէ՛ք, նուիրեցէ՛ք հայրենեաց սեղանին վերայ քիչն զոր ունիք, ես պիտի հանեմ 100 բիւր հրեշտակ իմ կողմէն ձեզ օգնելու։

Ո՛ Հայե՛ր, առ ձեզ կ'աղաղակեմ, Հայե՛ր ի Հայաստան և Հայե՛ր ի սփիւռս աշխարհի, մի՛ կոչէք զԱստուած անգութ․ Աստուած գթած է որում դարերէ ի վեր կ'աղօթեմք և կը գոչեմք «Տէ՛ր, ողորմեա, Տէ՛ր, ողորմե՛ա, Տէ՛ր ողորմեա։»

Կը զարմանա՞ք թէ ինչո՛ւ չկատարեր մեր խնդիրք գթածն Աստուած, Ազատն և Հզօրն որ կ'ուզէ թէ բոլոր ազգք և ժողովուրդք ազատ և հզօր լինին։

Չկատարեր մեր խնդիրք վասն զի գթածն Աստուած քմահաճոյք չունի, այլ օրէնք։ Նա պայմանա՛ւ կը լսէ աղօթից, անխախուտ և անփոփոխ օրէնքներու համաձայն։

Աստուած կըսէ մեզ— «Հայե՛ր, չեմ կրնար զձեզ ազատ ընել առանց ձեր կողմանէ կամաւոր, արիական զոհի։ Եթէ կ'ուզէք տալ զինուոր որքան կարող էք տալ, ես Եւրոպայէն կը հանեմ հզօրաց բանակ ձեզ օգնելու․ ես չեմ կրնար սակայն տալ իմ շատս այնմ որ չուզեր իւր քիչն տալ։»

Ահա այդ է ամենակալին պատասխանըն մեր աղօթից։

Նեղ է դուռն, Հայե՛ր, և անձուկ է ճանապարհն որ պիտի տանի զմեզ ի փրկութիւն։ Ինչպէս երկնից թագաւորութեան համար ըսուած է, ճիշդ նոյնն պէտք է գիտնամք երկրաւոր թագաւորութեան համար ևս— ԲՌՈՒՆՔ ՅԱՓՇՏԱԿԵՆ։ Օրէնք է այս։ Կ'ուզե՞մք որ տիեզերքի օրէնք մեր երկչոտ կամաց համաձայնին։ Մե՛ք պարտիմք համակերպիլ օրինաց, օրէնք չպիտի փոխուին մեր բաղձանաց համար։ Եթէ մեր սրամտութիւն ախտաւորեալ չլինէր, շատոնց ըմբռնած պիտի լինէինք այս ճշմարտութիւն թէ պէտք է բուռն լինիլ, աներկիւղ, մարտնչող, հասնելու համար ազատութեան։ Եթէ չփութամք փոխել մեր քաղաքականութիւն և մեր ընթացք ի յարձակողական, եթէ չյամաձայնեցունեմք մեր քաղաքականութիւն բնութեան քաղաքականութեան և Աստուծոյ քաղաքականութեան, օրէնք բնութեան և օրէնք Աստուծոյ պիտի ճմլեն շուտով մեր աղաչող բերաններ և մեր խելօք գլուխներ։

Շարունակելի

ՆԱՄԱԿ ՄԱՐԶՈՒԱՆԷՆ

Մարզուան, 14 Ապրիլ 1893

Վերջերս ամեն կողմերէ Փաշաներ և զօրքեր կը վազեն ի Մարզուան, յետին աստիճան կատղած, եթէ ձեռքերնէն գար Մարզուանը բնաջինջ պիտի ընէին։ Իրենց առաջին գործն եղաւ Նորաշէն դպրոցը կլլել ջանալ, որն խեղճերուն կոկորդը ճմլելով իրենց բաղձանքը ի գլուխ հանել չկարողացան։ Մատնիչք վստահացուցեր են Մարզուանէ 1000 մարթինի հրացան գտնել, սոյն յուսով խուզարկութիւնք կը ըլլան, և սակայն տանտիրոջմէ զատ ոչինչ գտնելով՝ կ'ըստիպուին զայնս ձերբակալել։ Սըվազի Կոնսոլը գալով խնդիրը կը քննէ, հեռագիր և 11 նամակներ կը ղրկէ առ դեսպանն ի Կ․ Պոլիս, որոց մեծ մասը վար դրուելուն պատճառաւ՝ Կոնսոլը անձամբ Պոլիս կերթայ իւր թարգմանը Մարզուան ձգելով։

Բանտարկելոց վերայ բնաւ յանցանք չէր գտնուէր, ուստի սոցա կանայք միանալով, թուով իբր 50, աղերսագիր մի կը տանին ի կառավարութիւն, խնդրելով որ եթէ իրենց էրիկներ յանցաւոր են՝ պատժուին, եթէ ոչ թող տալու են։ Գայմագամը կ'ըսէ թէ Պոլսէն լուրի կ'ըսպասեմ, լուրը եկածին պէս ըստ այնմ պիտի գործեմ։ Մեր գայմագամը, պէլէտիյէ րէիզը և ոստիկանապետը Պոլիս հեռագիր մը կուտան «800 զինեալ հայ կանայք կառա-

վարութիւնը կոխեցին» ըսելով, ուրկէ պատասխան կ'ընդունին բանտարկեալքն ի Զորում փոխադրել, իսկ հաւատարիմ պաշտօնեայք գիշերը կապելով, ամենը կ տանին ի Զորում, անկէ յէնկիւրիւ, ուր պիտի տեսնուի դատերնին։

Այս միջոցիս Փաշային մին պաշտօնանկ լինելով ետ կը կանչուի։

Ուրիշ դէպք մի տեղի կունենայ այն օրերն։ Երբ գոլէֆի աշակերտք գնդակ կը խաղան, գնդակը պարիսպէն դուրս կելլէ ուր տաճիկ երիտասարդներ գտնուելով կը խլեն, գոլեֆականք կ'ըսկսին կռուի. միսիօնարաց տունը կեցող Կոնսոլի թարգմանը խարազանը առած կատղած տաճիկները լաւ մը կը ծեծէ, նոքա ալ գայմագամէն դրդեալ ադերսագիր կուտան, կառավարիչն կը հեռագրէ ի Կ. Պոլիս թէ «60 զինեալ գոլէֆականք տաճկի տղայոց վերայ յարձակեցան, հազիւ ձեռքերնէն կրցինք ազատել։»

Մարզուանէ ի Պոլիս գացող Կոնսոլը Տաճկաց առ Հայս ըրած զրպարտութիւնքն կը պատմէ դեսպանին։ Ամերիկեան, Անգլիական և Բրուսիական դեսպանք կը ներկայանան Սուլթանին. մեր բարեխնամ Սուլթանն ալ կատարեալ ազատութիւն կը շնորհէ խնդիրը քննել և ինչ որ յարմար է ընել։ Նոքա կ'որոշեն երեւելի Ամերիկացի մը և ձէմալ Պէյը. որք անմիջապէս Մարզուան գալով գայմագամը կը կանչեն հետեւեալ հարցումներն կ'ընեն. քանի՞ կնիկ կառավարութեան դուռը եկան.— 55է 60.— զէնք ունէ՞ին.— ոչ. բռնաբարութիւն ըրի՞ն.— ոչ։ Ապա պէյէֆէնտի դիրիգին կը կրկնեն նոյն հարցումները. նա կըսէ բուն թիւն չեմ գիտեր բայց 3-400 հատ զինեալ եկան. ոստիկանապետն ալ կը հաստատէ թէ 2-300ի չափ էին և առանց զէնքի։ Ապա դպրոցի աշակերտաց հետ ծեծկուող տաճկները կը կանչուին, և կ'ըսեն թէ գոլէֆականք չեն որ զիրենք ծեծեր են այլ թարգմանը։ Այսպէս անիրաւ պաշտօնէից խօսքերը բնաւ իրարու չեն համաձայնիր, և բացարձակօրէն զրպարտութիւն լինելն տեսնուելով պաշտօնանկ կ'ընեն զայնս, բայց չեմք կարծեր թէ ասով պիտի բաւականանան։

Արդէն լսուած է թէ այս բաներուն ամէնը մատնիչներէ յառաջ կուգայ, և թէ Բագրատունեան անուն մատնիչն արդէն ատանային ձեռքը յանձնուած է։ Շատ ուրախութեամբ կը լսեմք ուրիշ աւելի երեւելի մատնիչի մի լայն փողոցի մը վերայ մէկէն անհոգի ձգելին. այս անձ խիստ հարուստ և եկեղեցւոյ ալ թաղական էր, որոյ տունը կ'իջնէին Փաշաներ և որուն հետ ժողովուրդը կը կողոպտէին. անունն է Մահտէսի Յ. Աղա Ղըմեան։

Այս էր Մարզուանի և շրջակայից վիճակը. գոլէֆի ուսուցիչք, հարուստք և աղքատք ի բանտ, Բրօֆ. Թումայեան և Պարոն Գայեան գրեթէ առանց կօշկի և վերարկուի Զորում կը տարուին։ Պատ. Գալուստեանի չափազանց նեղութիւն կը տրուի, որպէս զի Բրօֆ. Թումաեանը իբր ամեն չարեաց և ընկերութեանց նախագահն մատնէ, բայց դժբախտ կառավարութիւնը հաւատարիմներու ձեռօք գործ չկրնար տեսնել։

Հիմա Բրօֆ. Թումաեան և իրեն հետ եղող 40ի չափ անմեղներ ազատ թողտալ կը ջանան, բայց նոքա չեն ելներ, որպէս զի քանի որ յանցանք չունին, իմանան թէ ինչ պատճառաւ կամ օրինօք իրենց այսչափ նեղութիւն տուին։

Ողջ լերուք
ԼՈՒԻԿՆ

ՆԱՄԱԿ ԱՐԱՍԻՈՅԷ

Ամասիա Մարտ 11, 1893

Յայտարարութեանց խնդրոյն համար Սեբաստիոյ նոր կուսակալ Ալի Պէյն ի Մարզուան կը ղրկէ զԽոսրով Փաշա, և ոստ բանտերն կը լեցունէ Հայերով։ Այս տեղ խուզարկութեանց ատեն կին մի մեռաւ վախէն։ Երկու շաբաթ կայ որ ի Մարզուան Հայ մը հրացանի հարուածոց տակ դիապատ եղաւ, Խոսրով Փաշայի հետ առնչութիւն ունեցող մատնիչ մ'էր ինքն, և բանտարկեալ պարզամիտներն ջանացեր էր համոզել որ զԲրոֆ. Թումաեանն զրպարտեն իբրեւ հեղինակ յայտարարութեանցն։

Հոս ալ երկու շաբաթ առաջ Տաճիկ մը Հայոց կառքի մը կը մօտենայ և մէջը մտնելով ատրճանակի հարուած մի կուտայ հայ երիտասարդին մէկուն, «մարդ իւր թշնամին այսպէս կը զարնէ» ըսելով։ Զարնուողն չէ մեռեր։ Քանի մ'օր առաջ ալ Փաշային ծառան Հայու մը կուրծքը դա-

նակ մխեց, բայց ոչ մահացու։

Երկու ամիս կայ որ Սեբաստիոյ կաշառակուրծ վալին պաշտօնանկ եղած է, բայց իւր ցանած որոմներն դեռ առատօրէն կը բուսնին։ Նոր վալին բանտարկեալներն խումբ խումբ կ'արձակէ։ Ամասիոյ երկու բանտարկեալ վարժապետաց մին ազատ արձակուած էր, միւսն ալ հոս յղուած էր որ դատուի, և դեռ կը մնայ ի բանտի։ Քանի որ կաշառք տալու կարող չէ, և վարժապետ է, դեռ ատեն մ'ալ ազատութեան երես չպիտի տեսնէ կ'երեւի թէ։

Իրաւունք և օրէնք աւազակաց և անօրինաց ձեռքն յանձնուած է։ Խորով Փաշա ըսուածը Զէրքէպ է, 17 տարի առաջ աւազակութիւն ընող Հաճի Եուսուֆի ընկերն է և 40ի չափ մարդ սպաննած է այն ատեն։ Երկրին ներսերն շատ խռովեալ վիճակի մէջ են, առեւտուրն կեցած է և ամեն բան վատթարանալու և խառնաշփոթուելու վրայ է։

* * *

ՆԱՄԱԿ ԿԷՍԱՐԻԱՅԷ

...Մարտ 25 1893 (հին տոմար)

Փոքր Ասիոյ քանի մը քաղաքներն ու գիւղերն յեղափոխական յայտարարութիւնք փակցուած էին անցեալ Դեկտ. 25ին,— Գաղատիա, Կեսարիա, Եոզղատ, Մարսիւան, Ամասիա, Սեբաստիա, Կէմէրէկ և շրջակայքը։ Ամեն կողմեր ձերբակալութիւնք եղան Հայերէն, միայն Կէմէրէկէն և Տէնտելէն 70 հոգի ձերբակալուեցան և Սեբաստիա ասրուեցան։ Երկու ամիս բանտը մնալէն վերջ, դոցա 65ը արձակուեցան։ Այժմ դեռ ի բանտի կը մընան Յակոբ Պահլաւ, Մարտիրոս Զաղարեան՝ քարոզիչ բողոքականաց, Խաչատուր վարժապետ Նագաշեան, քէօշկէր Հաճի աղային Թոռն Մխիթար, և Պոյաճեան Յակոբի տղան Տոնիկ։ Սոցա անմեղութիւնն ալ պայացուցուելով կը յուսանք շուտով կ'արձակուին։

Հայ և Տաճիկ տայրերու գաղափարներն իրարու դէմ զայրացած, անվստահութեամբ կը նային միմեանց։

* * *

ՈՒՍԹԸՐԻ ՀԱՅՈՑ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐՆ

(Շար. և վերջ, Տես նախորդ թիւն)

Դէպքերու այս բոլոր ընթացքն երկու կարեւոր ճշմարտութիւն կը պարզէ. նախ, թէ ամեն առաջնորդ չկրնար առաջնորդել Ամերիկայի Հայոց. երկրորդ, թէ ոչ մի առաջնորդ կարող է հայ ազգն ետ ետ տանիլ։

Այս երկրի հայ գաղթականութիւնն յոյժ անհամատեղ տարրերու կուտակութիւն մ'է, խառն բովանդակելով ի ծոցին ամեն գաւառէ Հայեր, քաղաքացիներ և չինականներ, կիրթ և բիրտ, յոյժ ուսեալ և կարի տգէտ անհատներ։ Ընկերակցութիւնք կազմուած են ամեն տեղ և ամեն ոք, յետին գործաւորն անգամ, գումարմանց ներկայ կը գտնուի, կը լսէ լուրեր և ճառեր, ըստ կարի կ'իմանայ ազգային և քաղաքական կարծիքներ, և գրեթէ ամեն անհատ կը պատկանի կամ կը համակրի կուսակցութեան մի։

Հոգեւոր հովուին համար շատ դժուար է այս գանազան կարգերու և ջերմ կուսակցութեանց հետ վարուիլ ըստ արժանւոյն։ Թերեւս խոհեմ առաջնորդն ընարէ չերթալ ազգային ժողովներու, միջամուխ չլինիլ երիտասարդաց քաղաքական գործոց, այլ իւր բոլոր հոգ ու խնամ նուիրել եկեղեցական և կրթական գործերու, և հնկել հօտին սովորութեանց վերայ, յորդորելով ի ժուժկալութիւն, ի մաքրասիրութիւն և յընթերցասիրութիւն և այլն։ Եթէ մաւնաւոր կամ հանդիսաւոր առթիւ ներկայ գտնուի ազգային հանդիսի, յայնժամ իւր բանիւք և ընթացիւք վեր կը բռնէ ինքզինք քան զամենայն կուսակցութիւնս, յորդորելով որ ամեն ոք լինի խղճամիտ և աշխարհ, անկեղծ և անձնուէր, որ կուսակցութիւնք յարգեն զիրեար և սիրեն կարծեաց ազատութիւն։

Բայց եթէ հովիւ մի ոչ ազատամիտ և բարձրախոհ վեհութիւն ունենայ և ոչ զգուշաւոր խոհեմութիւն,— եթէ ինքն այ իբրեւ այս ինչ կուսակցութեան հասարակ անդամ մաւնակցի ժողովոց և խօսի, շուտով կը սպառէ իւր ազդեցութիւն և

կը հանդիսանայ անպատկառելի ։

Երբ իւր պաշտօնական դիրք համահաւասար բարձրութիւնն չունի ոք, ուշ կամ կանուխ կը զգայ իւր ցաւալի տկարութիւն, և կը փորձուի դիմել տկարին յատուկ եղող պաշտպանողական հնարքներու ։

Այսպէս Հայր Սարաճեան երբ իւր բարոյական իշխանութիւն կորոյս հօտին մեծագոյն և լաւագոյն մասին վերայ, սկսաւ տկար և անարժան միջոցներով ինքզինք զօրացունել ջանալ․ և ողբալի սխալ մի գործելով՝ ողջունեց և ընդգրկեց վերստին զԹոփհանէլեան։ Շատ չանցաւ, տեսաւ թէ աւելի վար կը հակի կռթնելով այն եղէգին զոր ինքն իսկ ջախջախած էր, ուստի և փոքր միջոցներու դիմեց, և չյաջողելով՝ մտաբերեց փորձել տկար միջոցներու վերջինն, այն է գրգռել մոլեռանդ հակառակութիւն ընդդէմ բողոքական Հայոց ։ Սակայն լուսաւորչականք սովրած էին իրենց բողոքական եղբարց հետ գործել միաբան և ձեռն ի ձեռն, և ուստի անոնցմէ զատուելու միտում չցուցին։ Պէտք էր ուրեմն զբողոքակա՛նսն խրտուցանել․ առ այդ նպատակ վարդապետն «Կաճառի» կանոնագրութեան մէջ բարեփոխութիւն մի մուծանել կուտայ որոյ արամադրութեան համեմատ ոչ մի բողոքական անդամ այլ ևս պիտի կրնայ ու և է պաշտօնի ընտրելի լինիլ ։ Արտօռոց բարեփոխութիւն մի զոր անհամատառլի ապօրինաւորութեամբ ուզած է օրինական գործել — յատկապէս արգիլելով բողոքական անդամոց ներկայութիւնն նոյն նստէն ։ Երբէք լուած բա՞ն է որ ընկերութեան կանոններն փոխուին անդամոց այս ինչ մասին մուտքն յատկապէս արգիլելով ։

Ի՞նչ արդիւնք ունեցաւ այդ հարուած ։ Փոխանակ բողոքականներն լուսաւորչականներէն բաժնելու, յերկուս ճեղքեց լուսաւորչականներն, մեծագոյն և աւելի լուսամիտ մասն հեռացունելով եկեղեցւոյ սրահէն և առաջնորդին նախագահութենէն ։ Այն ամօթալի բարեփոխութեան ապօրինի քուէարկութեան օրէն ի վեր ամեն կիրակի ի Կրէնճ Հօլ կը ժողովին Հայերն— 65ի չափ բողոքական և աւելի քան 400 լուսաւորչական Հայեր— և միաբան ու միաիրայարաջ կը տանին ոչ-կրօնական գործեր և կը ծեծեն ազգային և տեղական խնդիրներ ։

Եւ յայդմ իսկ է բոլոր այս եղելութեանց մխիթարական կողմն ։ Տկարք վայրապար կ'աշխատին իրենց շահուց հաշուով մոլեռանդութիւն արծարծել ժողովրդեան մէջ․ այժմ տիրող զգացումն ազգային է թէ՛ լուսաւորչականաց թէ՛ բողոքականաց մէջ, և այդ զգացման հրոյն նոքա ձուլուած են․ ո՛վ որ անոնք բաժնել փորձէ՝ իւր ձեռքն կ'այրէ ։ Այո՛, իւր ձեռքն կ'այրէ իւր պաշտօնին հպարտութիւնն բայց ոչ բարձրութիւն ունեցող հոգեւոր հովիւն, իւր ձեռք կ'այրէ նաև այն «մոլեգնեալ խմբագիր» որ մոլեռանդութեան կայծեր մոխրի տակէ դուրս հանել կը ջանայ ։

Շատ ետ մնացած էք, խե՛ղճ խմբագիր, 40—50 տարի ետ մնացած էք քան այն ժողովուրդն որուն առջեւ իյնալ կ'ուզէք ։ Ձեր ապիկարութեան վերայ դժբաղդութիւն միայն կ'աւելցունէք երբ կը նկրտիք զժողովուրդն 40—50 տարի առաջուան տղայական զգացմանց վերադարձունել ։ Գետին հոտանքն ետ դարձունելու ձեր այդ յիմարական փորձին մէջ արդէն ա՛յնքան քշուած տարուած էք յառաջադէմ հոսանքէն որ յոյժ մօտ կը գտնուիք ի յորձանուտս անհաւոր ։

Ուսթըրի լուսաւորչական Հայերն կը ճանաչեն իրենց բողոքական եղբայրներու ազգային զգացմանց անկեղծութիւնն, և ձեր ջանք, Պարո՛ն որմնադիր, անօգուտ են նոցա միութիւնն ու համերաշխութիւն քակտելու ։

Կեցցէ՛ ազատամիտ ժողովուրդն, կեցցէ՛ ազգային միութիւն ։

ԵՐԿՏՈՂ ԻՄՇՂՈՅ

Մուշէն վստահելի աղբիւրէ գրուած է հետեւեալն․—

Մշոյ առաջնորդը ձերբակալելով գունդ մը զօրօք Բաղէշ տարին ։ Դարձեալ օրէ օր եղելութիւնք յոյժ ահաւոր կերպարանք մը կստանան, քաղաքին մօտ ջրբեպանք և իշավարք կսկ սկսած են անցորդներ կողոպտել․․․

* *

Ազգային

ԵՒ

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

Մայիս 14ի գիշերն Նիւ Եորքի Հայերն մեծ և փառաւոր հանդէս մ'ունեցան, ուր մուտքն տոմսակաւ էր և արդիւնքն լոնտոն նեան Առմէնիի ի նպաստ։

Կը յուսացուի թէ գոյացած հասոյթն և արդէն կատարուած հանգանակութիւնն ի միասին առնլով հազար տոլարի մօտ գումար մի պիտի լինի յօգուտ «Առմէնիի» և թերթին անգլիերէնն ալ պիտի կրնայ վերսկսուիլ։

Ամերիկայի Հայերն տալու ինչո՞ւ չը-վարժուին քանի որ տալու առիթներն բաւական յաճախադէպ են։ Գրեթէ ամեն շաբաթ դրամ պալու առիթ մի, և լաւ առիթ մի կը ներկայանայ։

Հայրենասէր Էգնայեանի կիսարձանին ի նպաստ Փարիզեան հայրենակցաց հանգանակութեան մասնակցելու հրաւէր ուղղած էինք ժամանակ առաջ (Տես «Հայք» թիւ 5), և ուրախ եմք կարենալ ըսելու թէ հետեւեալ նուիրատուութիւնք մեզ յանձնուած են առ այն նպատակ։

Մեծ. Ցարութիւն Աղայ Իսկեան	10	տոլար
,, Տր. Մ. Տատրեան .	5	,,
,, Բարեկամ ոմն	3	,,
,, ,, ,, ...	1	,,

Առջի հինգ տոլարին հետ այժմ կ'ունենանք 24 տոլար կամ 120 ֆրանք ընդամենայն։

Այս պատեհութեամբ արժան է ծանուցանել թէ Մեծ. Ս. Մինասեանի նախաձեռնութեամբ այս տարի ուրիշ հանգանակութիւն մ'ալ եղած է հայաստէր միսիոնար վախճանեալ Վանէլէփի յիշատակին արձան մի կանգնելու համար։ Կը լսեմք թէ գոյացած գումարն բաւական մեծկակ է։

Թշուառաց, արկածելոց, հրկիզելոց և գանտարկելոց օգնելու համար շատեր կը յօժարին իրենց լուման տալ, բայց արձան կանգնելու համար դրամ տալու միայն այն կարգի անձինք կը մասնակցին որք դրամ բաւական ունին և բաւական ալ կրթութիւն՝ հասկանալու համար թէ արժանաւորաց յիշատակին արձան կանգնելու ի նպաստ ստակ տալն՝ գոյն պատուհանէն վար նետել չէ։

Քաղաքակրթուած ժողովրդոց պէտքերն յոյժ շատ են։ Այն զի Էգնայեան կիսարձանին ի նպաստ հանգանակութեան մասնակցելու մեր հրաւէրին պատասխանողներ կը գտնուին, կը նշանակէ թէ մեր ազգն ալ քաղաքակրթութեան ճամբուն մէջ մտած է։

*

* *

Անցեալ Մարտ ամսոյ 18ին Նիւ Եորքի Հայերէն իբր 40 կամ 50ն, յանուն Նիւ Եորքի հայ գաղթականութեան ինչ ինչ որոշումներ քուէարկեցին և Մեծ. Մ. Զերազի միջոցաւ յղեցին անգլիական կառավարութեան։ Գաղթականութիւնն կանխաւ հրաւիրեալ չէր ի ժողով, և ինչ որ մեծ մտս միթինկ կոչուած է, տեղի ունեցաւ յանկարծ Հայկական Միութեան սովորական մէկ նիստէն յետոյ։ Լոնտոնեան «Լառմէնի» թերթն այդ առթիւ կ'ըսէ թէ ուրախ է տեսնելու որ Ամերիկայի Հայերն «Լրջօրէն ձեռք կ'առնուն հայկական դատն։» Այս քաջալերական շնորհաւորութիւն կրնայ երկու թիւրիմացութեանց տեղի տալ. նախ, իբր թէ այդպիսի ժողով առաջին անգամ տեղի ունեցած լինէր ի Նիւ Եորք, ուր երեք չորս տարիներէ ի վեր նոյնպիսի ժողովներ եղած են և հինգապատիկ մեծագոյն բաղմութեամբ նոյնպիսի որոշումներ, բողոքներ և շնորհակալութիւնք քուէարկուած և կլասթընի և այլոց յղուած են։ Երկրորդ թիւրիմացութիւնն կրնայ այն լինիլ, իբր թէ այդպիսի քուէարկութիւնք և դիմեցմունք նշանակէին ազգային դատն լրջօրէն ձեռք առնուլ։ Թէպէտ ինքն Փրոֆ. Զերազ դիւանագիտական դործիչ մ'է, քրմէ իրաւամբ կը սպասէ «Հայք» որ օգնէ Նիւ Եորքի և բոլոր աշխարհի Հայոց հասկցունելու թէ միթինկ ընել, բողոքներ քուէարկել և տէրութեանց յղել՝ թէև ոչ անկարեւոր, է սակայն մեր դործոյն նուազ դժուարին և նուազ կարեւոր մասն։

«Հայք» այդպիսի միթինկներու շատ

արեւորութիւն չտար այժմ, բայց ի սըրտէ կը գովէ զայնս որք «ԼԱռմէնիի» հրատարակութեան օգնելու համար յաջող հանգանակութիւն մ'ըրին վերջերս։

*

* *

Լոնտոնեան Առմէնիի Մայիսի խմբագրականէն կ'առնումք հետեւեալ կտորն։—

«Դեսպանատան հայասէրն կը ծանուցանէ մեզ թէ Տիար Նելիտոֆ նորէն դիմեր է Բ. Դրան և Սուլթանին, որում յայտարարեր է թէ ճշմարիտ չէ բնաւ որ Խրիմեան Սրբազան գրած լինի առ Տիար Կլասթը։ Փատիշահն պատասխաներ է գրեթէ սա բառերով։—«Խրիմեան Սրբազան չեմ ուղեր ես, վասն զի նա ժողովրդական ոք է և սովորած է ժողովուրդն ոտքի հանելու։ Եթէ նա հաստատէ իւր բնակութիւն ի շրջակայս Երեվանի, կարող կը լինի մեր սահմանաց վերայ ծանր տագնապներ յարուցանել թրքական և նոյն իսկ ռուսական կառավարութեանց համար։ Այս խնդրոյ մէջ Թուրքիոյ և Ռուսիոյ շահերը նոյն են։ Հաճեցէք ուրեմն գրել առ Ն. Վ. Կայսրն՝ տալ կարեւոր հրամաններն վասն նորոգ ընտրութեան։—Դեսպանն կը պատասխանէ թէ չկրնար այնպիսի նամակ գրել, նկատելով որ Նորին Վեհափառութիւնն Զարն կատարուած իրողութիւն կը համարի Խրիմեան Հայրիկի ընտրութիւնն և միշտ կը յուսայ թէ իւր Վեհափառութիւն պիտի հաճի զնա արձակել հպատակութենէն։ Սուլթանն կը յայտարարէ վերջապէս թէ ինքն իսկ յանձն կ'առնու գրել այս մասին առ «իւր օգոստափառ եղբայրն, առ Զարն։»

*

* *

Լոնտոնեան «Տէյլի Նիուզ»ին կը հեռագրեն Կ. Պոլսէ, Մայիս 2ին։—

«Ամբաստանելոց ոմանք նշանաւոր բողոքական Հայեր են, և նոցա դատապարտութիւնն, ինչ և իցէ ապացոյցն, կանխորոշ եզրակացութիւն մի կը համարուի։ Բան զամենայն երեւելի ձերբակալելոց մին, բողոքական երէց Մաթէոս Գալուստեանն, այնպէս ծանրաբեռնեալ էր չոթայիւ որ չէր կրնար կառքն հեծնել Սեբաստիայէ Էնկիւրիւ տարուելու համար։

... Շատ ցաւալի բան է որ հրաման չէ տրուեր դատաստանն ի Կ. Պոլիս տեսնելու, քանի որ ամեն մարդ գիտէ թէ գաւառային դատարանն պարզապէս պիտի ընէ ինչ որ Նախարարն հրամայէ։

Նորոգ խռովութիւն մի տեղի ունեցաւ ի Կեսարիա անցեալ շաբաթ երբ ամբոխն յարձակում ըսաւ յուղարկաւորութեան հանդէս կատարող Հայերու վերայ։ Ժողովրդեան 150 երեւելի անդամք հեռագիր մի յղած են Մեծ Եպարքոսին՝ պաշտպանութիւն խնդրելու։ Բ. Դուռն արդէն վճարում ըրեր է Մարզուանի գոլէճին մասնակի աւերման ի փոխարէն, և արտօնագիր տուեր է նոյն հաստատութեան համար։

*

* *

Թեհրանէն կը հեռագրեն Մայիս 15ին — Շիրազ քաղաքին մէջ մեծ շքաւորութիւն կը տիրէ, և սովալլուկ ժողովուրդն ի խնդիր հացի ժխոր յարուցեր է։ Ժողովուրդն կ'ամբաստանէ կառավարութիւնն թէ ցորենն կ'ամբարէ յեռոյ աւելի թանկ վաճառելու նպատակաւ։ Ուրբաթէ ի վեր շուկաներն փակ են, և այնքան անկարգութիւն կայ որ զօրք յղել հարկ եղեր է կարգն վերահաստատելու համար։

*

* *

Ռուսիա մեծ գործունէութեամբ յառաջ կը մղէ իւր նոր մարտանաւերու շինութիւնն։ Երկու զրահաւոր և վեց ռըմբաձիգ նաւեր ի ծով պիտի մտնեն այս տարի, և 4 զրահաւորներ 1894ին։

*

* *

Միացեալ Նահանգաց կառավարութիւնն իւր միջազգային յարաբերութեանց աւելի փոյթ տանիլ սկսած է ժամանակէ մ'ի վեր, որոյ իբրև ապացոյց կրնայ նկատուիլ և այն իրողութիւն թէ պարզ մինիսթրներու տեղ դեսպաններ յղել որոշած է մեծ պետութեանց քով զԱմերիկա ներկայացուցանելու։

Միացեալ Նահանգաց Կ. Պոլսոյ դեսպանատան քարտուղար Նիւպէրրի, որ Թրքաց նպաստաւոր տեղեկագիր բերած էր Մարզուանէ, պաշտօնանկ եղած է։

*

* *

Շիքակոյի Արուեստահանդէսն թէպէտ Մայիս 1ին բացուեցաւ փառաւոր հանդիսիւ, լրագրեր կը ծանուցանեն թէ բոլոր շէնքերն չպիտի կրնան աւարտիլ յառաջ քան Յուլիս ամիսն, և հետեւապէս յայնըմ հետէ միայն պիտի կրնայ արուեստահանդէսն կատարելապէս կազմ և պատրաստ նկատուիլ։

Միացեալ Նահանգաց մէջ ձմեռն արտասովոր խստութիւն ցուցած լինելէ յետոյ՝ գարունն ալ ցուրտ, անձրեւոտ և յոյժ անհաճոյ կ'անցնի։ Շիքակոյի Արուեստահանդէսին կատարելագործումն յապաղեցուցող պարագայ մ'ալ օդոց դժնէութիւնն և փոթորիկք եղած են։ Շաբաթ կը լինի որ տարւոյն չորս եղանակներն յախուռն իրարու կը յաջորդեն, հով և անձրեւ, խոնաւ ցրտութիւն և սաստիկ տաք կը մրցին։ Եղանակն կը թուի մոռցած լինիլ թէ որպիսի պարտի եղանակել։ Անձրեւոց անհանդուրժելի յաճախութեան պատճառն ալ այն է գուցէ որ օտար երկրաց և ծովուց ամպերն ալ այս կողմն դիմել ուզած են Արուեստահանդէսն տեսնելու և իրենց յատուկ կերպովն շնորհաւորելու համար։

*

* *

Մալաթիոյ երկրաշարժէն պատճառեալ աղէտներն են, 885 անձ մեռեալ և 164 վիրաւոր, 2,719 տուն աւերեալ, 10 հազար անասուն սատակեալ, 31 մզկիթ կործանեալ։ Նիւ Եորք հասած առանձին նամակի մի համաձայն՝ չկործանած տուներն ու այլ շէնքեր ալ այնքան խարխլած են որ անբնակելի դարձեր են և հարկ է քակել և վերաշինել ամենն ալ։

*

* *

Տիրանուն Բարթուղիմէոս Սրբազան, պատճառելով անձնական տկարութիւնն, վերջնապէս հրաժարեր է Պրուսայի առաջնորդութենէն։

Կրօնական ժողովն որոշեր է շրջաբերականով ծանուցանել վիճակաւոր առաջնորդներու և վանահարց չկոչել զոք սարկաւագութեան և վարդապետութեան մինչև որ չընդունին Կրօն. ժողովոյ հաւանութիւնն և ընծայացուներն իրենց կանոնաւոր ուսումն չստանան Արմաշու դըպրեվանքին մէջ։

«ԲԱԶՄԱՎԷՊ»ն է մեր հայ հանդէսներու երիցագոյնն։ 1893 Թուականաւ սկսաւ նա իւր Յիսուն և մէկ երորդ տարին։ Ահաւասիկ Ապրիլ Թուոյ բովանդակութիւնն։—

Կենսագիր և Նկարագիր Եղնկայ վարդապետի Կողբացւոյ։— Հայկական բուսաբառութիւն։— Հայ Լեզուի ուսումն յԵւրոպա։— Հայք և Դիցաբանութիւն Հայոց։— Հայկական Վերտառութիւն մի ԺԲ դարու։— Զատիկ, Ծաղիկ և Թռչնիկ (բանաստ.)։— Իշխանաց Կղզիք։— Հոմէլս Գիսաւորն։— Գէլն ու Զորանը։

«ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ» գեղեցիկ հանդէս մ'է, գործ Վիէննայի Մխիթարեան Ուխտին։ Ահաւասիկ Ապրիլ Թուոյ բովանդակութիւնն։—

Վարդապետութիւն Սոռաքելոց Անվաւերական Կանոնաց Մատեանը։— Եղիսաբեթուպոլսոյ Պատմութեան մէջ երկու միջանկեալ դէպք։— Հայ Գիւղական Տունը (պատկերաւ։)— Միջին ու Նոր բժշկական Գրութիւնք։— Մովսէս Խորենացի և Պարթեւաց Ծագումն։— Զենոբ Գլակ։— Ժամացոյց (պատկերաւ)։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Մէկ օրինակի գինն է 20 սէնթ կամ մէկ ֆրանք —կանխիկ վճարելի։

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթերի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ գիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրանթ սթրիթի 60 նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ՚ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կարելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նաստը լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ։

T. LACHANCE, կօշկավաճառ
60 Front St. Worcester, Mass.

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԵՐԻ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԳՍ ԲԷՆՔ

Վուսթերի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբոց կէսին հաշուելով։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան։ բաղում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅՐ»
թղթակցիմ
Ա. տարի 1տոլար 50 սէնթ կամ 7ֆր. 50սանթ.
Բ. տարի 2տոլար կամ 10 ֆրանք

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
348 Fountain Street 28 South Margin Street
Providence R. I. U. S. Boston, Mass

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու սուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերը ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ըստակ դրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Սատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Զիմիշկէզէկ, Զունքուշ, ընդհանուր չրջականերուն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի դանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

C. F. RANDALL
177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթերի արդոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և բոլորներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ
Բանտալ

PATENTS HOPKINS & ATKINS washington, D. C. 20 years' experience write for informatian

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէռ, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալէռ, եթէ պայմանն հազար թալէռի է, կամ մինչև հինգ հազար թալէռ, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէռն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

RIPANS TABULES

REGULATE THE STOMACH, LIVER AND BOWELS, AND PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.

Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.

10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՈՐԾ

311 7դ. Էվինիու Նիւ Եորք

27դ և 28դ Փողոցներու միջև

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կարել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին: Մեր հասցէն է

385 Մէյն Փողոց, Ուուսթըր,

385 Main St. Worcester, Mass.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ